

- Մարզկենտրոնը՝**  
ք. Հրազդան
- Տարածաշրջանները՝**  
Հրազդան,  
Կոտայք,  
Նաիրի
- Քաղաքները՝**  
Հրազդան,  
Արուսյան, Չարենցավան,  
Բյուրեղավան, Ծաղկաձոր,  
Եղվարդ,  
Նոր Հաճն

Տարածքը	2 086 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0 %
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	60
Քաղաքներ	7
Գյուղեր	62
Բնակչության թվաքանակը 2012թ. տարեվերջին	255.3 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	138.2 հազ.մարդ
գյուղական	117.1 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2012թ.	8.4 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	54.1 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	154 987.4 հա
այդ թվում՝ վարելահողեր	37 845.8 հա

**ՀՀ Կոտայքի** մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

**ՀՀ Կոտայքի մարզի** տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: **Հրազդան գետը** (նախկին անվանումը՝ Ջանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

**Ազատ գետը** նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

**Մարզը** հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են <<Բջնի>> և <<Արզնի>> հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 28 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

**Արայի լեռը** (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

**Մարզի** հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա):

**Մարզի** տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2012թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 12.9 %,
- գյուղատնտեսություն՝ 6.3 %,
- շինարարություն՝ 9.2 %,
- մանրածախ առևտուր՝ 2.9 %,
- ծառայություններ՝ 2.9 %:

**ՀՀ Կոտայքի մարզը** համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

**Մարզի տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողն **արդյունաբերությունն է**: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում Էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն:

**Մարզի արդյունաբերության** մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (աղամանդի) արտադրություն):

**Մարզի գյուղատնտեսությունը** մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆարրիկաներ:

**Բեռնաուղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

**Արտյան քաղաքը** (2012թ. տարեվերջին՝ 43.9 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում զարեջրի արտադրությունը:

**Բյուրեղավան քաղաքի** (2012թ. տարեվերջին՝ 9.5 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց

տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

**Եղվարդ քաղաքը** (2012թ. տարեվերջին՝ 11.8 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, ալյուրի արտադրությունը, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

Նոր Հաճն **քաղաքի** (2012թ. տարեվերջին՝ 9.3 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):


**Հրազդան քաղաքի** (2012թ. տարեվերջին՝ 42.0 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է ՀՀ-ում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

**Չարենցավան քաղաքը** (2012թ. տարեվերջին՝ 20.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

**Քաղաքի արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

**Ծաղկաձոր քաղաքի** (2012թ. տարեվերջին՝ 1.3 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2013թթ. հունվարի 1-ի դրությամբ %



**ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը				
	2008	2009	2010	2011	2012
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 448	1 618	1 635	1 587	1 545
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	535	711	747	792	841
կրպակներ	852	848	826	735	645
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3	3	3	3	2
սպառողական ապրանքների շուկաներ	7	5	6	5	5
առևտրի այլ օբյեկտներ	51	51	53	52	52

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը				
	2008	2009	2010	2011	2012
Պետական նախադպրոցական	50	50	50	48	52
Պետական հանրակրթական	110	105	105	104	104
Ոչ պետական հանրակրթական	2	3	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	26	25	24	24	24
Պետական նախնական մասնագիտակա-կան (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	5	6	6	6	6
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	3	2	2	2	2

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>1</sup>
Հրազդան	ք. Հրազդան	42 010
Աբովյան	ք. Աբովյան	43 856
Բյուրեղավան	ք. Բյուրեղավան	9 542
Եղվարդ	ք. Եղվարդ	11 768
Ծաղկաձոր	ք. Ծաղկաձոր	1 261
Նոր Հաճն	ք. Նոր Հաճն	9 351
Չարենցավան	ք. Չարենցավան	20 436

**ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>2</sup>
1	Այափարս		2 332
2	Ակունք		2 164
3	Աղավնաձոր		1 245
4	Առինջ		5 700

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. արդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

<sup>2</sup> ՀՀ Արարատի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առնթրել ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2013թ. -ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգանքային համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>2</sup>
5	Արագյուղ		1 139
6	Արամուս		3 682
7	Արգել		3 339
8	Արզական		2 800
9	Արզնի		2 425
10	Արտավազ	• Արտավազ • Փլունիկ	1 016
11	Բայահովիտ		3 530
12	Բջնի		2 890
13	Բուժական		1 674
14	Գառնի		7 740
15	Գեղադիր		730
16	Գեղաշեն		3 986
17	Գեղարդ		370
18	Գետամեջ		792
19	Գետարգել		811
20	Գողթ		2 025
21	Զառ		1 357
22	Զովաշեն		168
23	Զովունի		5 530
24	Զովք		1 015
25	Զորավան		1 486
26	Թեղենիք		687
27	Լեռնանիստ		2 853
28	Կաթնադրբուր		724
29	Կամարիս		2 418
30	Կապուտան		1 215
31	Կարենիս		852
32	Կոտալք		1 952
33	Հանքավան		86
34	Հատիս		293
35	Հազավան		615
36	Զորադրբուր		2 456
37	Մայակովսկի		2 187
38	Մարմարիկ		860
39	Մեղրաձոր	• Մեղրաձոր • Գորգոչ (Կորչյու)	2 601
40	Մրգաշեն		2 125
41	Նոր Արտամետ		1 066
42	Նոր Գեղի		6 009
43	Նոր գյուղ		1 557
44	Նոր Երզնկա		1 804
45	Նուռնուս		602
46	Ողջաբերդ		1 003
47	Պռոշյան		5 206
48	Պտղնի		1 624
49	Ջրաբեր		444
50	Ջրառատ		577
51	Ջրվեժ		6 611
52	Սարայանջ		370
53	Սոլակ		2 485
54	Սևաբերդ		292
55	Վերին Պտղնի		743
56	Քաղսի		2 454
57	Քանաքեռավան		3 549
58	Քասախ		5 727
59	Քարաշամբ		688
60	Ֆանտան		1 041

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2012թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 144	4 856
Ծնվածներ, մարդ	143	66	77
Մահացածներ, մարդ	89	41	48
Ամուսնություններ	68	X	X
Ամուսնալուծություններ	10	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	27.8	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	225	114	111
հանրակրթական	1 332	645	687
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	143	95	48
նախնական մասնագիտական (արհեստագործական)	26	7	19
միջին մասնագիտական	55	22	33
բարձրագույն մասնագիտական	18	11	7
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	33 112	...	...
Մարզիկներ, մարդ	188	15	173
Զբաղվածներ, մարդ	3 851	1 663	2 188
նրանցից՝ գիտական հիմնարկներում	6	1	5
նրանցից՝ գիտության դոկտոր	0.0	0.0	0.0
գիտության թեկնածուներ	1	0.0	1
ուսուցիչներ	128	109	19
բժիշկներ	20	...	...
միջին բուժանձնակազմ	45	...	...
Գործազուրկներ, մարդ	984	345	639
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 502	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	371	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	20 201	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	592	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	48	X	X
աղ թվում՝ ոչ մեծ ծանրության	26	X	X
միջին ծանրության	15	X	X
ծանր	7	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: